# ՎԱՐԱՆԴԱՑԻ

## ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

### Ս. ԴԱԴԵԱՆԻ

## ՋԱՆ-ԳԻՒԼՈՒՄՆԵՐ

Խընումէն կյխտած տախտն ա,
Դըըըրգյըհօնէ վախն ա,
Շատըմ տխւս կյամ նի մընինւմ,
Ցարէս կյոլի վախտն ա։

—

Խուրդա 1) բաղին 2) շարալ 3) ըմ,
Մով 4) հալավս կարալ ըմ,
Խարար տըվըէքյ իմ նանուն,
Վըէր լով տըղէն ճարալ ըմ 5)։

—

Ծառէս մինը լու նուշ ա,
Ցարըս մին թուլտն ղուշ ա,
Ախպէրհունցանիմնըղանալ 6) մըէ,
Ցարըս քյըզանա անուշ ա։

—

Ծըմակումը կընի քաշկը 7),
Լով կընի պէրակ մաշկը 8),
Ըղտ տխւս մըէ կյալ բազար,
Թյէ յէօր կօնէ 9) չար աշկը։

—

Ծըմակումը կընի քաշկը,
Լով կընի լէն մաշկը,
Ցէս մատաղ ընիմ էն տըղէն
Վըէր ըրծաթէ 10) կյօտէն 11) ա
մաշկը։

—

Ծըրավալ ըմ ճիւր չըկա,
Սըրէրանումըմ ախպիւր չըկա,
Կըմէռնիմ ղորիբ էօլքյիմ,
Բըշտէս մար ու քուր չըկա։

—

Ծըրավալ 12) ըմ ճիւր պէրէք,
Խօրասանա 13) հիւն 14) պէրէք,
Խօրասանա հիւնն ինչ կանիմ,
Կօրած յարըս տօն պէրէք։

—

Կըրակ կանիմ խիւթէրէն,
Հընէրակ ընցըցրած ուրէրէն 15)
Ցէս մատաղ ըմ էն տըղէն,
Շէգյ ու կօրմիւր ըրղէրէն։

—

Կաքավը սուրուր 16) կըտա,
Ղումըրէըը 17) տուրիւր կըտա,

---

1) Մանր. 2) աքասանոց. 3) շարել եմ. 4) կտոր է կարմիր շապկացու կանանց. 5) ճարել եմ. 6) մի վիրաւորւի. 7) սատանայ, չար ոգի. 8) մէջք. 9) կը վերցնի. 10) արծաթէ. 11) գօտի, (վար) Թօխկանա. 12) ծարաւել եմ. 13) Խորասան, վարանդացիների երեւակայութեան մէջ մի հեռու, շատ հեռու երանաւէտ քաղաք է. 14) հոն. 15) օրերին. 16) սուլոց. 17) ղումլորը։

Հիւրիւ մին յար 1) չօնէ,
Օնքէրը իւրիւր կըտա։

—

Կընձիմ2) ցօռնէն3) զորդոն4)
Հարսէնը կըքօշին փորդոն 5),
Տիւսյէկէ թա յարըս տըէսնամ,
Նի յար մըտալ դալդան 6)։

—

Կըլխավըս կըտավ կըտպմ,
Շօշվա ղըլէն դաւի կըտամ,
Հու կյա իմ յարէս տըէզն ասէ,
Վըէրթը հըէտան մին կավ կըտամ։

—

Կընստիմ ըխպրին քարէն,
Կյիր կըկարըիմ թոզո 7) յարէն,
Համ կյըրոլ 8), համ փուշմանալ ըմ 9)
Մըէվ10)մընա11)ըստի տարէն12)։

—

Կընստիմ խիւթէրէն,
Ղաչանք 13) կանիմ սուրփէրէն14),
Ցէս մին ալանգյէօզ 15) խընձէօր բէդի,
Իմ ասմունք ըխճըկան պուչէրէն։

—

Կընըստիմ կյէտէն քարէն,
Կյիր կը կյըրիմ կարօտ յարէն,
Մըչանք ըրէն փըշմընէցէ,
Մըէվ անիմ դիւշմոնին տարէն։

—

Կընըստիմ տըէղըս հարթա 16),
Զօրք կյիւալը գյիւղ ու վարթ ա,
Քյըէցէք ըսէցէք էն տըղէն,
Վըէր դիւշմոնըտ տանա 17) մարթ ա։

—

Կընըստիմ Տօղա սարէն,
Աչկըս կօնիմ խըզոզին քարէն18),
Խօրասան յէսիր ըէդի,
Իմ ասմունք յարէն առէն։

—

Կընըստիս տանը բուրջին,
Օսուքըտ կա խալի 19) խուրջին,
Քյէզ մին թաքուն խօսկ ըսէց,
Ընդավ գյաւուր 20) գյիւրջին 21)։

—

Կըսէրիմ տաք ըշունքէն,
Հավան ըմ ըչկը օնքէն,
Կըռացավ թա ճիւր խըմէ,
Քյաքյիւլն 22) ընդավ թըգյինքէն։

—

Կընըստիմ ցըէվքէն պըտկէն,
Սիւրմտ կըշարիմ թըէվքէս պըտկէն,
Հու իմ յարէն դիւշմընօթուն 23) անէ,
Գյիւլլտ24)տա թօքէն պըտկէն25)։

—

Կընըստիմ ցըէվքէն26) պըտկէն,
Սիւրմտ 27) կը շարիմ 28) թըէվքէս 29) պըտկէն,
Հու վըէր խօսկ տա մուռանա,
Գյիւլլտ նի կյա թօքէն պըտկէն։

—

1) Սիրեկան. 2) կը հնձեմ. 3) ցորենի. 4) մեծ-մեծ, լաւ տեսակը. 5. վարագոյրը. 6) ծածուկ տեղ. 7) (վար) Բաքվա. 8) կը գրեմ. 9) համ փուշմանիմ. 10) սև, (վար) կըրակ. 11) ընկնի. 12) տարէ. 13) աղաչանք. 14) սուրբերին. 15) կարմարաթուշ խնձոր (աչք). 16) հարթ. 17) տանու, մօտ, ծանօթ մարդ է. 18) (վար) սարէն. 19) գորգ. 20) անխիղճ. 21) կռիւ. 22) մազերը. 23) թըշնամութիւն. 24) գնդակ. 25) ծայրին. 26) կտուրի դէպի բակի կողմը. 27) արծաթէ զարդարանք. 28) կշարեմ. 29) թեւերի ծայրին։

Կըտըրավըս քյընէց մին ճօխտ 1) ղոռնա 2),
Մինը սէրտւ ըմ գյիւղիւմ չըմ վըէրն ա,
Աչկըէրն ար սիւըմտ օնքէրն 3) ար խուըմա 4),
Փափաղը վըէր կոլով քյոքյիւլն 5) ար բուըմա 6)։

—

Կըտըրավըս քօչ ընցավ,
Քօչ քօչու մաչ ընցավ,
Սըրտէս մին պօղ կըրակ կա,
Վըէչ էրից, վըէչ վըէր ընցավ։

—

Կըտըէրըս 7) շալ կը սաղի,
Տանըս կոլ կը սաղի,
Իմ յարէս կյէցէնը շալ ա,
Ամմա թիըմա շալ 8) կը սաղի։

—

Կըրակը թիժ 9) չի ծօխ ա տամ,
Ըրտըէրէն ղըլղանը 10) զէօխ ա տամ,
Ամէն յարը յարէն տըսնալավ
Ըուընգյ ըռոնգյ փօխ ա տամ։

—

Կըրակ կանիմ խիւթէրէն 11),
Դըլոկ 12) կանիմ խըչէրէն 13),
Էն օրէն մատաղ վըէր կըլօխըս,
Կըտընիմ յարէս պուչէրէն 14)։

—

Կըքյընիմ լաղէս տօռնը,
Պիըիմ մին սինի նօռնը,
Սինի նօռնը հինչ անիմ,
Կօղիմ իմ յարէն կօռնը։

—

Կըքյընիմ ծառէն տակը,
Կը քաղիմ բարէն խակը,
Վըէր խօսկ տաս տանիս վըէչ,
Սըէվ անիմ օսէտ թոքյը։

—

Կըքյնիմ չօլը վաստակ 15),
Քահօր քա մօրնըս մաշնակ 16),
Թօխպը առաչըս կըտըեց,
Մընացէ բօյիտ հտսրտթ 17)։

—

Կյըտըյէր 18) կարմուռջ 19) քյըցած,
Մըննամաչը 20) վարթավ 21) լըցած,
Քյէցէք ըսէցէք նոմըրդ 22) յարէն,
Քու յարն ա դոըդով լըցած։

—

Կյէտ ա քյընիւմ լափու տալավ,
Ծօխտ ղըրաղը ծափ տալավ,
Էսա յէկավ իմ Կյիւքյին,
Զըխմախէ 23) փափաղը թափ տալավ։

—

Կյէտէն էն ղօլը քար ա,
Էս ղօլըս պէցիր սար ա,
Խանէն չըմ տալ իմ ախճիգյը,
Քյալբալայի Սօլթանաղայ։

—

Կյիւթոնը վարումը սօղ ա 24)
Մին ախճիգյ իւղէցէ տըէղա 25),
Քյէցէ փըռըկըէցէ տա պերիմ,
Տըէսէ վըէր մին կըէղ ա 26)։

---

1) Զոյգ. 2) կռունկ. 3) յօնքերը. 4) արմաւի պէս են. 5) մազերն է. 6) սև. 7) կտուրի (վերան շալ փռել). 8) լաւ շալի տեսակ. 9) խիստ չէ. 10) բոյս է. 11) բլուրների վերան. 12) ուխտ, խընդիրք. 13) սուրբերին. 14) քունքերի վերայի մազերը. 15) յոգնած. 16) միջնակ. 17) կարօտ. 18) գետն իվեր. 19) կամուրջ. 20) մառնամէջ. 21) վարդով. 22) դաւաճան. 23) սև, (վար) մուղայի. 24) դժւար է առաջ գնում. 25) Տըէղ գիւղը. 26) թիզ է։

Կյխւրծխըս 1) չըվան 2) ա,
Իփոծ 3) ճոշըս 4) հըվանայ 5),
Շատ խօսխս խըրէգյ 6) խօսխս,
Խօսքէրըտ լօխ 7) դըվան 8) ա։

—

Հոբգյոն 9) փըռնէ 10) վըէր 11) տըէռնա,
Ցծըը յարէն սէր տըէռնա 12),
Վըէր ինձ առնումա 13), տանում ա,
Էն տօնը լըցնվըէ 14) վըէր տըէռնա։

—

Հոբգյա 15) օնիմ ըրած 16) ա,
Էն տըղէն դըլվէն 17) տըրած ա,
Ըդո խըրէգյ հինչ խօսխս,
Անումըս յըրատ կյըրած ա։

—

Հուլու մաշալ ըմ, տօն յէք,
Քյամըտ 18) մաշալ ըմ տօն յէք,
Պխլխւր լխանընգյին նըման,
Հուլու մաշալ ըմ տօն յէք։

—

Հաղկալ ա 19) հաղկալ ա,
Բաքվա շըհարը ծաղկալ ա,
Էն տըղէն ըռէցէք կյա,
Դխւքյան բազար 20) սարքալա 21)։

—

Հաս ա 22) էս հաս ա,
Դխըբանդն 23) ա խաս ա 24),
Ախճի նանէ սուս ըրա,
Էն տըղէն պէնէրը պըտը հասա 25)։

Հոսխը ա հա, հոսխը ա,
Տօն չօնէ քյոսխը ա,
Կօղէ ասխքյ, կօղէ վուչ,
Էն տըղան ինձ նոսխը ա։

—

Հավանըմ հավան ըմ,
Մըէծ կըրպըէտէն 26) խավան 27) ըմ,
Ըդո կօղի հարխւրը խօսէ, *)
Ցէս քյէզ սըրտանց հավան ըմ **)։

—

Հարայ, հարայ կյուրէնէս 28),
Հըսկըհանալա կյըրէնէս,
Խաբար ըրէքյ իմ նանուն,
Դէօլմիշ 29) ա ըլու յըրէնէս։

—

Հարայ, հարայ հըրէնէ,
Հըսկը հանած ա կյխւրէնէ,
Շօշ տամ շըմալ կըռանամ,
Դխըխ 30) վոթոնըս 31) ըրկընանամ։

—

Հարայ 32) հըրէնէն 33),
Հըսկըհանալ 34) ա կյըրէնէն 35),
Ջախտ 36) ըրէք ջուռուտհ 37) պէրէք,
Դէօնմիշ 38) ա ըլու յըրէնէն 39)։

—

*) Էլ [1]) գյխղո, ուլում [2]) գյխղա,
**) Ցէս էն տըղէն հավան ըմ։
[1]) Ժողովուրդը. [2]) աշխարհքը։

1) Գործւածս. 2) պարան. 3) եփած. 4) ճաշս. 5) հովանայ. 6) քիչ. 7) բոլորը. 8) իրաւացի է. 9) խուրջին. 10) բռնիր. 11) թափւի. 12) դառնայ. 13) առնում. 14) լցնւի. 15) խուրջին. 16) գործած, գեղեցիկ զարդարած. 17) մէջքէն. 18) վիշտդ, կարօտդ. 19) ?. 20 խանութ-շուկա. 21) սարքել-հաստատել է. 22) հասնելու է. 23) նուրբ. 24) լաւ կտոր է, 25) պատիժ է. վար. Դէօլբոնդն ա. 26) կապերտի. 27) գորգի խաւը. 28) վառ ցորնի արտերը. 29) թարախակալել է. 30) դէպի. 31) հայրենիքս. 32) հասէք. 33) հաւար. 34) հասկերից դուրս են գալիս հատիկները, հասունացել են. 35) գարեղէնը. 36) ջանք. 37) բժիշկ. 38) ուռել, լցւել է թարախով. 39) վէրքերս։

Հարթնը 1) քյընէց կոլովը 2),
Կյըմբըրի 3) տըվավ հալաւը 4),
Էօղից 5) թա 6) մին յէտ 7) յէշի 8),
Նարն ընգավ կէօլովը 9)։

—

Հարսէնը կընի փորդոն,
Կըհընձիմ ցօռնէն ղորդոն,
Շատ յըշէցէ, շատ փըհ մէցէ,
Ընցավ քօլէն ղալդան։

—

Հափը 10) կյաս, հափը կյաս,
Մըէծ ղըղըղանէն 11) քափը 12) կյաս,
Վըէր ինձ անում 13) անիս տանիս վըէչ,
Ծըյանըտ տիւս տափը 14) կյաս։

—

Հէյ 15) ըրէք, հէյ ըրէք դանան կյա,
Ծըհանը 16) մըէկնէ 17) կուտանան կյա,
Հու լով տըղա յա, ծէն 18) անէ,
Էրվոծ յարը հըէտան 19) կյա։

—

Հըէվ 20) կանիմ հըէվըս հըէվա,
Հըէվըս ծըրանիւ 21) թէվ ա 22),
Կանց 23) տօպը 24) կավուչ 25) կյորմիւր,
Վըէր պէնամ 26) սըէրտըս սըէվ ա։

—

Հըրվանանց 27) հըրվանանց տըղա,
Կօրըէկն 28) ա Ջըրվանանց 29) տըղա,
Տիւս յէք դէմանց 30) կըտօրը 31),
Հըէտատ ըրմանան 32) տըղա։

—

Հինտծըս կապա կյալիս,
Ջօլան ճըպատ ա կյոլիս,
Հոլի 33) ըրէք էն տըղէն,
Միւշտըրիքյըս շատ ա կյոլիս։

—

Հինտծըս 34) կապա 35) յէկալ,
Սարան ճըպատ 36) ա յէկալ,
Ցէս մին պիծի ախճիգյըմ,
Միւշտըրիքյըս 37) շատ ա յէկալ։

—

Հինչ 38) ըմ անում անումըս,
Խիլտ 39) դորդ 30) կա ջանումըս,
Ցէս կըմէռնիմ ջահիլ 41) ջըվան 42),
Կըմընա փուչ 43) անումըս 44)։

—

Հինչ վըէր անիս քյէզ կանիս,
Օթաղնըէրը փորշ 45) կանիս,
Ջըհիլնէրէն 46) նի կանիս,
Ըհիլնէրէն 47) տիւս կանիս։

---

1) Հարսը. 2) կալով. 3) կարմրի. 4) շապիկը. 5) ուզեց. 6) թէ. 7) յետ. 8) նայել. 9) ? 10) ? 11) կաթսայ. 12) փրփուրը. 13) անուն անել, նշան տալ, 14) մեռնես. 15) հէյ արէք. 16) ունելիք, որով հացը թոնրից հանում են. 17) մեկնիր. 18) ձայն տայ. 19) հետևից. 20) ? 21) ծիրանու. 22) ճիւղ, (վար.) շէվա. 23) քանզ... 24) կարմիր ծաղիկ դաշտի, տօպ. 25) չկայ. 26) բանամ. 27) հարևանի. 28) կորեկի արտը. 29) շիրւանից, ազգանուն է. 30) դիմացի. 31) կտուրը. 32) զարմանան. 33) իմաց տուէք. 34) գործւածքի հինւածքը. 35) շփոթւել է. 36) ճիպոտ. 37) ուզողները. 38) ինչ եմ անում, ինչպէս է. 49) շատ. 40) վիշտ. 41) ջահել. 42) երիտասարդ. 43) վատանուն. 44) անուն. 45) գորգերով ծածկել. 46) երիտասարդներին. 47) ծերերին։

Հիւնի ծառէն բար կընի,
Ծըէտը յըրա թառ կընի,
Դորդը սըրտէն կըրակ կընի,
Վըէր էրվումա հոֆւնց ճար կընի։

—

Հօռէ ծառէն բար չի նիլ,
Ըռունց 1) քյէօնգյիւլ 2) յար չինիլ,
Աճի նանէ խօսէլ մըէր, *)
Սըրվըտարէն 3) ճար չի նիլ։ **)

—

Հօռէ ծառէն բար չի նիլ,
Ղուշը 4) յըրա 5) թառ 6) չի նիլ,
Տակը քար ա վարթ չի նիլ ***),
Էրած սըրտըէն ճար չի նիլ ****)։

—

Հօռէ 7) ծառէն բար 8) չինիլ,
Տակը քար ա վար 9) չընիլ,
Նանէ խըրէգյ 10), սըէրտը շիւ-
շտ 11) յա,
Վըէր կօտըէ էլ ճար չի նիլ։

—

Հօրա 12) նօրա ա տըղա,
Թոքյնա 13) թըփօր 14) ա տըղա,
Նըշանածըդ տանը չի,
Ըռոնգյըտ հճըր ա, ա տըղա։

Հօրա 15), հօբա էն տըղան,
Սարումը քօն ա էն տըղան,
Թօռա յէկալ թըրչըլ չի,
Ցափունջին շօռ 16) ա էն տըղան։

—

Հօփա 17) հօփա ա տըղա,
Շէլտկըտ 18) չօփ ա 19) ա տըղա,
Ծըէխը 20) տընիմ ըռաչկէտ 21), *)
Գյիդոս 22) թա փօփ ա 23) ա տըղա։

—

Ղըզղանէս 24) կըտընիմ խըփէն 25),
Կօրծ 26) կանէ մըէր դըփէն 27),
Ցէս մատաղ ընիմ իմ յարէն,
Թօղտ կյայիս մըտքէն 28)։

—

Ղուշը կըծըվվա բաղումը,
Կանանչ խըյար թաղումը,
Իմ ախպէր հըշտէղ տըէսէր,
Դարյաղն օսէն բաղումը։

—

Ղուշը 29) կըծըվվա 30) բաղումը,
Կանանչ խըյար թաղումը,
Մին դըսստ 31) յէս գիւլ ըէդի,
Իմ յարէն փըփաղումը 32)։

—

Ղուշը կանչեց բաղումը,
Խըյարը ծաղկեց թաղումը,
Իմ յարը մին խօսկ ասեց,
Մընաց սըրտէս դաղումը։

---

*) Սըէրտը վըէր կա մին շիւշտյա,
**) Վըէր կօտըէ ճար չի նիլ։
***) Կօղի հորիւր տարէ ասին,
****) Սըրվըտարէն ճար չի նիլ։

*) Իփիմ տընիմ ըռաչկէտ։

---

1) Առանց. 2) (գեղեցիկ) մազերի. 3) սիրողին. 4) բաղէն. 5) վերան. 6) չի իջնի. 7) ուռի. 8) պտուղ. 9) վար չի լինիլ. 10) քիչ. 11) ապակի է. 12) ուր է. 13) մենակ. 14) ? 15) ուր է. 16) վերան է քցել. 17) երեխաներին խաղացնելու բացականչութիւն. 18) շալակդ. 19) փայտ է. 20) ցեխ. 21) առաջիդ. 22) իմանաս, թէ. 23) մանկան, երեխայի կերակուր է. 24) կաթսայիս. 25) երերանակալը. 26) կուրծը կաթնով կլցնուի. 27) կովի անուն ?. 28) մտադրութիւն. 29) թռչունը. 30) կերգէ. 31) փունջ. 32) գլխարկումը։

Ճէլլըրա 1) պըրծընինքյ 2),
Դոստ ու3)գխուշմոն4) հըրցընինքյ,
Սուփըրէն 5) ճըրաքյ 5) վառինքյ,
Դխուշմոնէն բալան 7) կուրցը-նինք 8)։

—

Ճըղացէն 9) տօնը 10) տաշած ա,
Ցալլէխը 11) գյխւլով նախշած ա,
Կէռ կէռ ունքէրէտ 12) մըչէնիմ,
Վըէրվըէսկէ 13) ղըլըմավ 14) քա-շած 15) ա։

—

Ճըղացէն տօնը տարթ ա,
Կըտէրը լիգյը մարթ ա,
Ցարըս կյամա հըռնացէ,
Ծէռքէնը փօնջ վարթ ա։

—

Ճըրին հըղէն սառալ ա,
Աչքի կօռնըս 16) տարալ ա, *)
Էն քյոքյըլիգյ 17) պօչիգյ 18) տը-ղան, **)
Օշըս, մըէտքըս տարալ ա։

—

Մահխին 19) կը շինիմ ըրբէս 20) օխը 21),
Ցէր կընի ղարախանէն 22) քըթէն) ծօխը 23),
Մին ինձ տըվէքգխուշմանին տըղէն,
Տիւս օնիմ աչքէն թօխը 24)։

*) Մաչի մաննըս աւէղ տարալ ա,
**) Ամէն մին յարըս տըսնալավ։

Մաննումըս կա մուտանա,
Թօնումս կա կուտանա,
Ցարըս բաղէն հըղէցը Ջըհից 25)
Վախից, կարից վըէչ թա մու-տանայ։

—

Մաշինում 26) կընի մորդըվոն 27),
Շէնում 28) կընի լով դըվան 29),
Էն տըղան մին խօսկ ասից,
Սըրտումըս մընաց բոնդըվոն 30)։

—

Մորջոն 31) գյինիւ խօռնը նըմ 31),
Բոգյլոր 33) բէգյին 34) թօռնը նըմ 35)
Քյէցէք ըսէցէք Թըվէօսէն 36),
Վըէր յէս աչի 37) կօռնը նըմ։

—

Մըէծ արտումը ղուշ կընի,
Կըըրվուըրթէն 38) ամանը կյիւշ կընի,
Ընէրակ ընդա կընի վըէր,
Իւրոն յարէն թուշ կընի։

—

Մըէծ արտումը 39) հօնձ 40) կանիմ,
Ջինըս 41) կօտըէ 42) հունց 43) կանիմ,
Թօրքէն44)տըռանը45) յալանչի46)
Հըյին 47) տըռանը հունց կանիմ։

---

1) Շուտ արա. 2) պրծնենք. 3) բարեկամ և թշնամի հարցնենք, ճանաչենք. 5) սուրբերին. 6) ճրագ. 7) որդին. 8) կորցնենք. 9) Ջրաղացի. 10) դուռը, 11) թաշկինակ. 12) յօնքեր. 13) ոսկի. 14) գրիչով. 15) նկարած է. 16) աջ կուռը շատ կուժը կրելուց փչացել է. 17) մազերով. 18) անպոչ, կարճ հագուստով. 19) մայիսին. 20) սայլիս. 21) լծակ. 22) անուն է. 23) քթի, 24) ծուխը. 25) թուսխը. 26) պատահեց. 27) մեռաքսէ թելի գործարան. 28) սանդուխք. 29) գիւղում. 30) դատաստան. 31) վիշտ. 31) մարջան. 32) խոտեղէն. 33) անուն է. 34) բէգ. 35) թոռը. 36) Թէոս. 37) օգնականն եմ. 38) կալւորդ. 39) արտի մէջ. 40) հունձ. 41) մանգաղս. 42) կոտրէ. 43) ինչ. 44) թուրքի. 45) մօտ. 46) քծնող, ստախօս. 47) հայի։

Մըէծ արտումը մօլլաբաշի,
Տըշտըտակումը 1) թըչոծ 2) կյոշի,
Ա յէրէ շէնին տըղա
Նէրքէ շէնին ըղբաշի։

—

Մըէծ մութալէն 3) պանէրն 4) ա,
Գյոնջիւմ 5) նըստած խանէրն ա,
Ա՛տղա խըրէգյ հինչ սազ 6) ածիս,
Համօթ 7) ա էն քու հանէրն 8) ա։

—

Մըէր արտումը հօնձ կանիմ,
Զինլա կօտրէ հունց կանիմ,
Վըէր իմ յարըս մըէտըս ընգնէ,
Բա էն վախտը հնունց կանիմ։

—

Մըէր ըրբէն ճաղը բէդի,
Ծէր խըյարէն թաղը բէդի,
Էն չըւըվըէր 9) քյընող տըղէն,
Պըրտնին յէս խաղը բէդի։

—

Մըէր թըվոնգյ ծանդըր ա,
Լօխ ըրծաթէ բոնդէր ա,
Ախտախանը սատկալ ա,
Ծին ու ղուշը անդար ա։

—

Մըէր կըտըրէն 10) փիւրփիւտ 11),
Ծէր կըտըրէն կուրկուտ 12),
Ցօրղան 13) վըէր 14) քյըցիմ ղտ-
լոմքյար 15),
Մաչը կըպէնամ սօվդաքյար 16)։

—

Մըէր կըտօրը կարկուտ ա,
Ծէր կըտօրը փիւրփիւտ ա,
Մըէր տանէնը սօվդաքյար,
Ծէր տանէնը ղոլոմքյար։

—

Մըէր կըրակը թիժ կանիմ,
Մըէր օթաղը փորշ կանիմ,
Վըէր գյիդոմ յարըս կյամա,
Ծըրտն ճըրաքյ կանիմ։

—

Մըէր մութալէն 17) պանէրը,
Գյոնջիւ նըստած խանէրը,
Ատըղա խըրէգյ քյընի յէքյ,
Համօթ ա, տանն ա քու հանէրը։

—

Մըէր տանը տակէն կար կանիմ,
Ասըէղըս 18) կօտրէ հունց կանիմ,
Նամարդ յարըս վըէր տօն կյա,
Բիւլբիւլ 19) ծէնըս յէր կանիմ։

—

Մըէր տըռնէրը չըրդըխավուր ա,
Սարէրը լօխ ծիյավուր ա,
Ասօր էն օրէն մատաղ,
Վըէր իմ ախպէր թըքյովուր ա։

---

1) Տաշտի տակին. 2) Թրջած. 3) մոթալ, պանրի պարկ. 4) պանիր. 5) Գանձակում. 6) սազ ածես. 7) ամօթ է. 8) անհրն է. 9) վարելահողերը գնացող. 10) կտուրին. 11) փիրփէտ բույսը. 12) կորկոտ. 13) վերմակ. 14) վեր քցել, մեկնել. 15) Նախշուն. 16) վաճառական, կտորեղէն վաճառող. 17) պանրի մոթալ, պարկ. 18) ասեղ. 19) սոխակի։